ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ/ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի երկրորդ կարգի մասնագետ
/ծածկագիր՝ 64-4.3-44/

Բաժնի վարիչի հանձնարարությամբ մասնակցում է մարզային ենթակայության օբյեկտների տեխնիկական վիճակի ուսումնասիրությանը, կապիտալ շինարարության և հիմնանորոգման աշխատանքների նախնական ծախսերի հաշվարկին, կապալառու կազմակերպությունների կողմից ներկայացված հանձման-ընդունման արձանագրություններում ներկայացված աշխատանքների իսկության ուսումնասիրությանը, Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, իրականացնում է Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- **առնվազն միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի**
- **նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝**
- **սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի ,,բ,, ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.**
- **անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում**
- **համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:**
- **տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.**
- **անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրի գործառույթներից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների տիրապետում /Ցանկեր N 1,2/:**

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- **գրավոր դիմում՝ /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.**
- **կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի /փաստաթղթերի/ պատճեն /պատճենները/**
- **աշխատանքային գրքույկի պատճենը՝/ ունենալու դեպքում/**
- **քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը.**

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար 3.4 չափսի.
- անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 13^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է « 9» դեկտեմբերի 2015թ.:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ /ք.Գավառ, Կենտրոնական Հրապարակ 7, հեռ. 0264-2-43-76/: